ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-2026/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Կապան

16 ապրիլ 2026թ
ժամը 15:30

Մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ՝ Սևակ Նավասարդյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ տնտ.գծով տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝
Արա Մանուկյան-«Կապանի ԲԿ»ՓԲԸ որակի վերահսկման և բարեփոխումների գծով տեղակալ
Սիրանուշ Գևորգյան -«Կապանի ԲԿ»ՓԲԸ հեմոդիալիզի ավագ բուժքույր
Լարիսա Հովհաննիսյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ հաշվապահ
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան- գնումների համակարգող

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 15:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. Տեղեկություններ հայտերի բացման մասին

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-2026/3** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	ՀՎՀՀ	Հասցե	Էլ. փոստի հասցե
1.	«Արշ-Արա»ՍՊԸ	09414862	ք.Կապան, Երկաթուղայինների փող. նրբ.5, շենք 10/1	arsharallc@mail.ru

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին

Մասնակցի կողմից ներկայացրած հայտում բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

- հավելված 1-ի իրական շահառուների վերաբերյալ պարբերությունում կայքէջի հղումը սխալ է,
- հայտում բացակայում է աշխատակազմում ներգրավված բարձրագույն կրթությամբ առնվազն մեկ ճարտարագետ-շինարար առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով մասնագետի գրավոր համաձայնությունը, անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները,
- № 2 չափաբաժնի համար գնային առաջարկում առկա է թվաբանական սխալ, գնային առաջարկը սխալ է լրացված.

2	*«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ լվացքատան մասնակի նորոգման աշխատանքներ*	10833333,33 /տաս միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա	216666,67 /երկու հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/	1300000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.

ՀՀ	Մասնակցի անվանում	Նախահաշվային գին	Մասնակցի գնային առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Ընդամենը
Չափաբաժին 1՝ «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հեմոդիալիզի բաժանմունքի ընթացիկ նորոգման աշխատանքներ					
1	«Արշ-Արա»ՍՊԸ	2853970	2250000	450000	2700000
Չափաբաժին 2՝ «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ լվացքատան մասնակի նորոգման աշխատանքներ					

5. Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

7. Մասնակցին հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տալու նպատակով**, գնահատող հանձնաժողովը որոշեց** հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել 1 (մեկ) աշխատանքային օրով և այդ մասին համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ ներկայացնելու բացակայող փաստաթուղթը՝ առնվազն մեկ ճարտարագետ-շինարարաի փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվել է 2026թ-ի ապրիլի 17-ին ժամը 16:00-ին ք. Կապան, Մ. Ստեփանյան 13 հասցեում , որին մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Սևակ Նավասարդյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ տնտ.գծով տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝
Արա Մանուկյան-«Կապանի ԲԿ»ՓԲԸ որակի վերահսկման և բարեփոխումների գծով տեղակալ
Սիրանուշ Գևորգյան -«Կապանի ԲԿ»ՓԲԸ հեմոդիալիզի ավագ բուժքույր
Լարիսա Հովհաննիսյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ հաշվապահ
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան- գնումների համակարգող

8. «Արշ-Արա»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում էլ.փոստով, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝0

9. Հայտերը գնահատվել են ՍՄԿԲԿ-ԳՀԱՇՁԲ-2026/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

- № 1 չափաբաժնի համար «Արշ-Արա»ՍՊԸ-ի մերկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում

հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել է «**Բավարար**»:

- № 2 չափաբաժնի համար «Արշ-Արա»ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է **«անբավարար»** և **մերժվել է**՝ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

10. Գնահատող հանձնաժողովը որոշեց № 1 չափաբաժնի համար ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **«Արշ-Արա»ՍՊԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

11. Գնահատող հանձնաժողովը որոշեց № 2 չափաբաժնի համար «Արշ-Արա»ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել և ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին (սխալ գնային առաջարկ):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

12. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Սևակ Նավասարդյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Արա Մանուկյան

_____ Սիրանուշ Գևորգյան

_____ Լարիսա Հովհաննիսյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Սահականուշ Գրիգորյան